5. Ինֆորմատիկա

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2023-2024 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների «Ինֆորմատիկա» առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Աշակերտների անվանական ցուցակների ձևանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները և Օլիմպադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով՝ առաջին /դպրոցական/, երկրորդ /մարզային/ և երրորդ /հանրապետական/:
4. Օլիմպիադան անցկացվում է հանրակրթական դպրոցում սովորող և C կամ C++ ծրագրավորման լեզուներից որևէ մեկին տիրապետող աշակերտների համար: Օլիմպիադան անցկացվում է երկու խմբով. I խումբ՝ մինչև 9-րդ դաս., II խումբ՝ 10-12 դաս.:
5. Օլիմպիադայի երեք փուլերի տարբերակները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է առցանց /օնլայն/ եղանակով:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել «Ինֆորմատիկա» առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել 4-րդ կետում նշված ծրագրավորման լեզուներից որևէ մեկին տիրապետող ցանկացած աշակերտ՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրենը մինչև 2023թ. նոյեմբերի 10-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ ձևանմուշի, ներկայացնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:
10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2023թ. նոյեմբերի 14-ը ներառյալ մասնակիցների ցուցակները՝ ըստ ձևանմուշի, ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2023թ. դեկտեմբերի 15-ին, ժամը 13:00-ին՝ առցանց /օնլայն/ եղանակով: Օլիմպիադայի անցկացման գործընթացին և ստուգման համակարգին ծանոթանալու նպատակով 2023թ. դեկտեմբերի 8-ին, ժամը 13:00-ին կանցկացվի փորձնական, ուսուցողական փուլ:
13. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ կողմից սահմանված վայրում:
14. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:

15. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2024թ. հունվարի 24-ին, ժամը 11:00-ին՝ առցանց /օնլայն/ եղանակով:
16. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
17. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2024թ. մարտի 9-ին և 10-ին, սկիզբը՝ ժամը 10:00- ին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված վայրում:
18. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
19. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
20. Օլիմպիադայի երրորդ փուլի դիպլոմակիրները համարվում են ինֆորմատիկայի միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ: